ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման և հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի---------- 00-ի N2/փ-00 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, Մեղրի համայնքի ավագանին

1,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում կատարել փոփոխություն,որպես առաջնահերթ միջոցառում, բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր փոխադրել իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողերից 0,2973 հեկտար /կադաստրային ծածկագիր՝ 09-051-0435-0007/՝ :

2,Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ
Սյունիքի մարզ, համայնք Մեղրի գյուղ Կարճևան
ՄԱՍՇՏԱԲ 1:5000



Հողամասի			
Հոդադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4302941.4591	8604156.0594	50.10
2	4302991.5474	8604157.0772	60.32
3	4302991.3870	8604217.3956	47.38
4	4302944.0078	8604217.8024	61.80
1	4302941.4591	8604156.0594	

(1) — Դիտարկվող հողամաս՝ 0.2973 հա, կադաստրային ծածկագիր՝ 09-051-0435-0007:

Կատարող _____ (ստորագրություն) Վաչե Թոքմաջյան (անուն,ազգանուն)

Որակավորման վկայականի համարը N 0404 տրման ամիս, ամսաթիվը «30» նոյեմբերի 2020թ.

Իրավաբանական անձի 286.110.1146221 (պետական գրանցման համար) «Գեոքոնսթրաքթ» ՍՊԸ (անվանում)

ՏՆՕՐԵՆ _____ (ստորագրություն)

Ամսաթիվ «01» հուլիսի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

«ГЕОКОНСТРАКТ» ՍՊԸ GEOCONSTRACT LLC 02831632 REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Մեղրի համայնք,
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ.
+374 286 4-34-23, +374 286 4-35-
00, meghri.syuniq@mta.gov.am

N **1267**
02 սեպտեմբեր 2022 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
Հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ

Հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական վարելահող 0.2973 հեկտար /կադաստրային ծածկագիր 09--051-0435-0007/ նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:

Հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար հիմք է հանդիսացել իրավաբանական անձի կողմից համայնքի ղեկավարին ուղղված դիմումը, ըստ որի նախատեսվում է նշված հողամասը օգտագործել ազատ տնտեսական գործունեության համապատասխան: Հողամասի նպատակային նշանակության փոփոխման դեպքում, այն կտրամադրվի օրենքով սահմանված կարգով, ինչի արդյունքում կավելանան համայնքի սեփական եկամուտները և խթան կհանդիսանա համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Տվյալ հողաշինարարական գործի վերաբերյալ ներկայացնում եմ դրական կարծիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ. Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Հովսեփյան հեռ. 0286-4-35-00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Մեղրի համայնք,
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ.
+374 286 4-34-23, +374 286 4-35-
00, meghri.syuniq@mta.gov.am

N **1269**

02 սեպտեմբեր 2022 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է այն մասին, որ Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.2973 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսք /կադաստրային ծածկագիր՝ 09-051-0435-0007/ հողամասից 80-100 մետր շառավղով հեռավորության վրա առկա է միջպետական նշանակության Մ-2 /մոտեցում Նախիջևանի սահմանին Ագարակից/ ճանապարհը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ. Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Հովսեփյան հեռ. 0286-4-35-00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Մեղրի համայնք,
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ.
+374 286 4-34-23, +374 286 4-35-
00, meghri.syuniq@mta.gov.am

N **1268**
02 սեպտեմբեր 2022 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0,2973 հա /կադաստրային ծածկագիր՝ 09-051-0453-0007/ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ. Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ. Հովսեփյան հեռ. 0286-4-35-00

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի

ղեկավար Բագրատ Զաքարյանին

«Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ի տնօրեն

Դավիթ Կարապետյանից

Մարզ Սյունիք, համայնք Մեղրի, գյուղ Կարճևան, հողամաս

Դ Ի Մ ՈՒ Մ

ՀՈՂԱՄԱՍԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ փոխել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարևան գյուղում գտնվող Մեղրի ազատ տնտեսական գոտու հողամասի նպատակային նշանակությունը (հողամասի ծածկագիրը՝ 09-051-0435-0007)

1) հողամասի մակերեսը՝ հա 0.2973, փոփոխվող հողամասի մակերեսը՝ հա 0.2973

2) գլխավոր հատակագծով նախատեսված նպատակային և գործառնական նշանակությունները՝

Գյուղատնտեսական, վարելահող

3) առաջարկվող նպատակային և գործառնական նշանակությունները՝

Բնակավայրերի, հասարակական կառուցապատման

4) հողամասի նշանակությունը փոփոխելու նպատակը (նախատեսվող օբյեկտի բնույթը, ծավալը, հզորությունը)՝

Վերոնշյալ հողամասը պատկանում է «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ին: Հողամասի գործառնական նշանակության փոփոխության նպատակն է՝ այն համապատասխանեցնել ազատ տնտեսական գոտու գործունեությանը և նախապատրաստել հողամասը շահագործող ընկերությունների վարձակալության համար:

6) բիզնեսի նպատակով նախատեսվող օբյեկտների մասին տեղեկատվություն (կատարվելիք ներդրումների չափի և ստեղծվելիք աշխատատեղերի վերաբերյալ)՝

Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունից հետո այնտեղ իրականացվելու է Մեղրի ազատ տնտեսական գոտուն թույլատրված արտադրաարդյունաբերական գործունեություն, որը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 1595-Ա որոշման 2-րդ կետով:

7) հողամասի սեփականության (օգտագործման (վարձակալության), իրավունքի վկայականի պատճենը՝

երկու թերթ:

8) ինքնակամ շինություններ (առկայության դեպքում)՝

Դիմող՝

Մեղրի ԱՏԳ ՓԲԸ տնօրեն Դավիթ Կարապետյան

31.08.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «29» Հունվարի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

,,ՄԵՂՐԻ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ,, ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Մեղրի գյուղ Կարճևան հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վաճառքի պայմանագիր 13/12/2017թ, Հատակագիծ 11.01.2018թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-051-0435-0007

Մակերեսի չափը (հա)՝ 0.2973

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/h	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մերի Դավթյան

զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

0.2973 km
Image © 2022 CNES / Airbus
Google Earth
1985
Imagery Date: 9/16/2019 38 S 604480.70 m E 4301228.81 m N elev 1766 ft eye alt 5094 ft